ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սպիտակ 10/09/2024

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:
Բացակա էին՝ Մանուշ Աթյանը, Արկադի Ասատրյանը, Կարեն Գասոյանը, Կարինե Դիլաքյանը, Համլետ Մազմանյանը, Գևորգ Մարգարյանը, Վարազդատ Մխիթարյանը, Գագիկ Սահակյանը, Արամայիս Փիլոյանը

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի իրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Քաջայր Նիկողոսյան, Արտակ Մաթոսյան, Հովիկ Հովհաննիսյան, Ազգանուշ Ֆրանգյան, Վարուժան Ապրեսյան, Երեմ Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արտակ Մաթոսյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ազգանուշ Ֆրանգյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգը.

1) Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 139-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
/Զեկուցող՝ Վ.Ապրեսյան/

2) Սպիտակ քաղաքի աղբամանները «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հանձնելուն համաձայնություն տալու մասին
/Զեկուցող՝ Ա.Մաթոսյան/

3) Սպիտակ համայնքի Գոգարան բնակավայրում գտնվող 06-030-0161-0001 կադաստրային ծածկագրով հողամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարմանը համաձայնություն տալու մասին
/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

4) Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրում գտնվող 06-086-0135-0001 կադաստրային ծածկագրով հողամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարմանը համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա.Ֆրանգյան/

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա.Մաթոսյան/

6) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

7) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

8) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

9) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

10) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

11) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով Մելսիկ Սպարտակի Դիլբարյանին տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

12) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով Հայկ Բաբկենի Այվազյանին տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

13) Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային վարձավճար սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

14) Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային վարձավճար սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

Օրակարգի զեկուցումից հետո, քննարկելով 3-րդ հարցի հետ կապված Գոգարան համայնքի բնակիչների կողմից Սպիտակ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և կից ստորագրահավաքի ցուցակը, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Արտակ Մաթոսյանն առաջարկեց, հիմք ընդունելով Գոգարան համայնքի բնակիչների դիմումը, հարցը հանել օրակարգից, առաջարկը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Որոշվեց օրակարգից հանել 3-րդ հարցը և օրակարգը դնել քվեարկության 13 հարցով:

Ավագանու անդամ Սասուն Ասատրյանը առաջարկեց 4-րդ հարցը ևս հանել օրակարգից՝ առանց հիմնավորման: Նրան միացավ նաև ավագանու անդամ Վահե Ղազարյանը: Նրանք հայտնեցին, որ ցանկանում են օրակարգից հանել հարցը՝ հայտնելով իրենց բացասական կարծիքը: Առաջարկությունը չդրվեց քվեարկության, քանի որ օրենքով նախատեսված հիմնավորում չներկայացվեց, որոշվեց հարցը թողնել օրակարգում և առաջարկվեց իրենց կարծիքները հայտնել նախագծի քննարկման և քվեարկության ժամանակ:

Օրակարգի նախագիծը՝ 13 հարցով դրվեց քվեարկության:

Ավագանու անդամներ Վահե Ղազարյանը և Նարինե Հակոբյանը դեմ քվեարկեցին օրակարգի հաստատմանը:

Ավագանու անդամներ Նունե Էհտիբարյանը և Վարդուհի Թումանյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Ավագանու անդամ Սասուն Ասատրյանը հարցի քվեարկությունից առաջ լքեց նիստերի դահլիճը:

Կողմ-13 Դեմ-2 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 139-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ԱՊՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի «Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 139-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցի քվեարկության ժամանակ ավագանու անդամներ Սասուն Ասատրյանը և Գուրգեն Փիլոյանը լքեցին նիստերի դահլիճը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՄԱՆՆԵՐԸ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ քաղաքի աղբահանությունն իրականացնում է «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ քաղաքի տարածքում տեղադրված և տեղադրման համար նախատեսված աղբամանները «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հանձնելուն:

Հարցի քվեարկության ժամանակ ավագանու բոլոր անդամները ներկա էին նիստերի դահլիճում:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-086-0135-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի, հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 7-ին Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրում տեղի ունեցած հանրային լսման արձանագրությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1.Նախնական համաձայնություն տալ «Դ.Ա.Վ. ՖԱՅՆԴԵՌ» ՍՊԸ-ի կողմից Սպիտակ համայնքի Շենավան բնակավայրում գտնվող 06-086-0135-0001 կադաստրային ծածկագրով հողամասում նախատեսվող, ՀՀ Լոռու մարզի Հարավային Հանքակուտակի և հարակից տեղամասերի սոկի-բազմամետաղների հանքերևակուտակումների տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարմանը՝ համաձայն քարտեզ սխեմայի:

Հարցը դրվեց քվեարկության:

Ավագանու անդամներ Քաջայր Նիկողոսյանը և Արտակ Մաթոսյանը կողմ քվեարկեցին հարցին:

Ավագանու անդամներ Լուսինե Ավետիսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Սամվել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Նունե Էհտիբարյանը, Զալիկո Համբարյանը, Վարդուհի Թումանյանը, Սարգիս Փիլոյանը, Վաչիկ Գրիգորյանը, Վահե Ղազարյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, Աննա Ալթունյանը և Սասուն Ասատրյանը դեմ քվեարկեցին հարցին:

Հարցը չընդունվեց:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 6-ի թիվ 303-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները քաղաքացիներին նվիրատվությամբ փոխանցելուն՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Սպիտակ համայնքի և քաղաքացիների միջև կնքվող նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են քաղաքացիների միջոցների հաշվին:

Ավագանու բոլոր անդամները ներկա էին նիստերի դահլիճում:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25062024-06-0080 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0040-0084 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,14295 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 219 785,625 ՀՀ դրամ:

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Քվեարկությունից առաջ ավագանու անդամ Սամվել Սիմոնյանը դուրս եկավ նիստերի դահլիճից:

Ավագանու անդամ Վահե Ղազարյանը դեմ քվեարկեց հարցին:

Ավագանու անդամներ Նունե Էհտիբարյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, Սասուն Ասատրյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21062024-06-0042 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-109-0001-0033 կադաստրային ծածկագրով 0,73 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, անասնագոմ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 3 107 610 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 425,7 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Ավագանու անդամ Վահե Ղազարյանը հարցի քվեարկությունից առաջ լքեց նիստերի դահլիճը:

Ավագանու անդամներ Վարդուհի Թումանյանը, Նունե Էհտիբարյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, Աննա Ալթունյանը և Սասուն Ասատրյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման թիվ 16112023-06-0035 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0436-0013 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0928 հեկտար մակերեսով 3-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 188 616 ՀՀ դրամ:

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Նախագծի զեկուցման ընթացքում Սամվել Սիմոնյանը վերադարձավ նիստերի դահլիճ:
Ավագանու անդամներ Գուրգեն Փիլոյանը, Նարինե Հակոմյանը, Վարդուհի Թումանյանը և Սասուն Ասատրյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114/

Նիստը նախագահողը հայտարարեց հինգ րոպե ընդմիջում:
Ընդմիջումից հետո ավագանու անդամներ Վահե Ղազարյանը և Լուսինե Ավետիսյանը չներկայացան նիստին:

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08022021-06-0046 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0492-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,02592 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 748 440 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 2887,5 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Ավագանու անդամներ Գուրգեն Փիլոյանը և Նարինե Հակոբյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02092024-06-0028 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0191-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, առևտրի սրահ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 488 400 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Ավագանու անդամներ Գուգեն Փիլոյանը, Վարդուհի Թումայնաը և Նունե Էհտիբարյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄԵԼՍԻԿ ՍՊԱՐՏԱԿԻ ԴԻԼԲԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 481-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02092024-06-0039 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ա.Մանուկյան փողոց, 5/5 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-1783-0010 կադաստրային ծածկագրով 0,00028 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը, թեքահարթակ կառուցելու համար, առանց

մրցույթի, կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով Մելսիկ Սպարտակի Դիլբարյանին տրամադրելուն:

2. Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճար սահմանել 2 800 ՀՀ դրամ:

Նախագծի զեկուցման ընթացքում Վահե Ղազարյանը ներկայացավ նիստին և մասնակցեց քննարկությանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԿ ԲԱԲԿԵՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 481-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19062024-06-0041 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Վանաձորի խճուղի, 9 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0228-0044 կադաստրային ծածկագրով 0,0018 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, տաղավար տեղադրելու նպատակով, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով, 15 տարի ժամկետով Հայկ Բաբկենի Այվազյանին տրամադրելուն:

2. Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճար սահմանել 10 000 ՀՀ դրամ:

Ավագանու անդամ Վարդուհի Թումանյանը նախագծի քննարկման ընթացքում դուրս եկավ նիստերի դահլիճից:

Ավագանու անդամներ Վահե Ղազարյանը և Գուրգեն Փիլոյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24062024-06-0080 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0040-0082 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,14813 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Հողամասի մեկնարկային տարեկան վարձավճարը սահմանել՝ 2 300 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի:

Ավագանու անդամներ Նունե Էհտիբարյանը, Վահե Ղազարյանը, Գուրգեն Փիլոյանը և Նարինե Հակոբյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19062024-06-0001 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-095-0246-0039 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,273 հեկտար մակերեսով 4-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:

2. Հողամասի մեկնարկային տարեկան վարձավճարը սահմանել՝ 4 400 ՀՀ դրամ, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի:

Ավագանու անդամներ Նունե Էհտիբարյանը, Վահե Ղազարյանը, Գուրգեն Փիլոյանը և Նարինեե Հակոբյանը ձեռնպահ մասնակցեցին հարցի քվեարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120/

Ավագանու անդամներ

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Ազգանուշ Ֆրանգյանը

_____